ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Բառարաններով աշխատանքը որպես կրտսեր դպրոցականների բառապաշարի հարստացման և աշխարհաճանաչողության զարգացման միջոց

Հետազոտող ուսուցիչ՝ Հասմիկ Հայրապետյան
«Աբովյանի կրթահամալիր» ՊՈԱԿ

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

Գլուխ 1. «Բառարաններով աշխատելը որպես կրտսեր դպրոցականների բառապաշարի հարստացման և աշխարհաճանաչողության զարգացման միջոց» թեմայի տեսական- գործնական հիմունքները 5

1.1 Աշակերտների բառապաշարի հարստացումը, աշխարհաճանաչողության բարձրացումը բառարանով աշխատանք իրականացնելու միջոցով 5

1.2. Հետազոտական աշխատանք 9

Եզրակացություն 19

Օգտագործված գրականություն.....21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այսօր դպրոցականների բառապաշարի հարստացման հարցը խիստ արդիական է: Գիտության առաջընթացի ճանապարհին ստեղծվում են նորանոր բառեր, որոնցից շատերը բարդ են և անհասկանալի: Այդ իսկ պատճառով առաջնային խնդիր է դպրոցականների բառապաշարի հարստացումը: Որքան հարուստ է մարդու բառապաշարը, այնքան հեշտ է իրականանում հաղորդակցումը ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր խոսքի միջոցով:

Յուրաքանչյուր ուսուցիչ մայրենիի դասը պետք է կազմակերպի այնպես, որ աշակերտը ուսուցման ընթացքում սովորի մտածել, վերլուծել, համեմատել, ինքնուրույն եզրահանգումների գալ: Այս ամենի համար պետք է ունենալ հարուստ բառապաշար և լավ զարգացած կապակցված խոսք: Այս ամենին նպաստում է բառարաններով աշխատանքը, իսկ այսպիսի աշխատանք ծավալելը կրտսեր դպրոցում ընթերցասեր, կիրթ, զարգացած քաղաքացու ձևավորման ամուր հիմքն է:

Հետազոտության նպատակը

- կրտսեր դպրոցականների կողմից բառարանների տարբեր տեսակների օգտագործումը ոչ միայն մայրենիի դասագործընթացում, այլև դասերից դուրս,
- բառարանների միջոցով աշակերտների բառապաշարի հարստացումը, աշխարհաճանաչողության բարձրացում, խոսքի զարգացում,
- բառարաններով աշխատանք կազմակերպելու մոդելի ստեղծում և դրա իրագործումը մայրենիի դասերին :

Հետազոտության խնդիրները.

- որոնել բառարաններով աշխատանք կազմակերպելու նոր ուղիներ,
- ձեռք բերել գիտելիքներ բառարաններով աշխատելու ժամանակ առաջացած խնդիրների վերաբերյալ, կատարելագործել բառարաններով աշխատելու կարողությունը,
- բարձրացնել երեխաների հետաքրքրությունը գրքերի , հատկապես բառարանների նկատմամբ, ձևավորել ընթերցասեր քաղաքացու գաղափար,
- իրականացնել տարրական դասարաններում մայրենիի դասաժամերին բառարաններով աշխատելու մոդելներ:

Հետազոտության օբյեկտը. հանրակրթական դպրոցներում բառարանների միջոցով բառապաշարի հարստացման և աշխարհաճանաչողական գիտելիքների ձեռքբերման գործընթացն է:

Հետազոտության առարկան. բառարանների միջոցով բառապաշարի հարստացման և աշխարհաճանաչողական գիտելիքների ձեռք բերման մեթոդների և միջոցների ընտրությունը:

Վարկածը՝ եթե մայրենիի դասերի պարբերաբար օգտագործվեն բառարաններ, ապա դա կնպաստի աշակերտների բառապաշարի հարստացմանը, աշխարհաճանաչողական գիտելիքների ձեռքբերմանը, խոսքի զարգացմանը:

Հետազոտության մեթոդներ / տեսական և փորձարարական/.

- ուսումնասիրություն, վերլուծություն, ուսուցիչների փորձի վերլուծություն,
- ուսումնասիրված նյութի դասակարգում, ինդուկցիա, դեդուկցիա,
- աշակերտների աշխատանքի դիտում,
- անկետավորում,
- դիագնոստիկ ստուգողական աշխատանքներ,

Աշխատանքը բաղկացած է մեկ գլխից, որն իր մեջ ներառում է երկու ենթագլուխ, եզրակացությունից և օգտագործած գրականության ցանկից: Ընդհանուր 19 տպագիր էջ:

ԳԼՈՒԽ 1. «ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԵԼԸ ՈՐՊԵՍ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԱՐՍՏԱՑՄԱՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ» ԹԵՄԱՅԻ ՏԵՍԱԿԱՆ- ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

1.1 Աշակերտների բառապաշարի հարստացումը, աշխարհաճանաչողության բարձրացումը բառարանով աշխատանք իրականացնելու միջոցով

Սովորողների բառապաշարի հարստացման անհրաժեշտությունը որոշվում է հետևյալ ձևերով.

- լեզվում բառերի խիստ կարևորումը,
- բառապաշարի հարստացման պահանջմունքը, քանի որ ինչքան հարուստ է բառապաշարը, այնքան բովանդակային, գեղեցիկ է նրա բանավոր և գրավոր խոսքը:

Բառապաշարի հարստացման շուրջ տարվող աշխատանքը շատ յուրահատուկ է: Բառապաշարը բառերի որոշակի ցանկ է, որոնց բացատրությունը պետք է պարզաբանված լինի երեխաներին և որոնց օգտագործմանը պետք է նախապատրաստել երեխաներին:

Բառարանները՝ որպես բառարանով աշխատելու միջոց, ստեղծվել են տարբեր նպատակներով: Մի դեպքում մեթոդիստները որպես հիմք են ընդունել բառերի քերականական-ուղղագրական դժվարությունները, մյուսները՝ դրանց իմաստային արժեքը սովորողների բառապաշարի հարստացման համար: Բառարանով աշխատանքի առաջին մոտեցումը քերականան- ուղղագրական ուղղվածության աշխատանքն է, երկրորդը՝ իմաստային ուղղվածության աշխատանքը: Երկու ուղղություններն էլ որոշում են իրենց բնորոշ խնդիրները:

Քերականական- ուղղագրական ուղղվածության աշխատանքը միավորում է բառի հետ աշխատանքի հետևյալ ձևերը.

- ✓ **ձևաբանական**
- ✓ **շարահյուսական**
- ✓ **ուղղագրական:**

Իմաստային ուղղվածության աշխատանքը միավորում է բառի հետ աշխատանքի հետևյալ ձևերը.

- ✓ **իմաստային,**
- ✓ **ոճական:**

Ինչպես նկատեցինք մեր հետազոտության ընթացքում, ուսուցիչները աշակերտների բառապաշարի հարստացման գործընթացում հիմնականում դիտարկում էին մայրենիի դասագրքերում բնագրերի վերջում տրվող բառերի բացատրության, ուսումնասիրվող գրական ստեղծագործությունների, փոխադրությունների և շարադրությունների բառապաշարը:

Աշակերտների բառապաշարի հարստացման հիմք են հանդիսանում թեմատիկ-իմաստային խմբի բառերը: Իմաստային թեմաների ընտրությունը սովորողների բառապաշարի հարտացման և աշխարհաճանաչողության համար պետք է լինի երեխաների կյանքին նախապատրաստելու նպատակի հաշվարկներով:Սրա հետ մեկտեղ դիդակտիկ նյութերի դերը պետք չէ գերագնահատել, քանի որ լեզուն կարող է ազդել մարդու վարքի վրա: Ուսուցչի կողմից հատուկ ընտրանքով առանձնացված բառաֆոնդը որոշակի ազդեցություն է ունենում երեխայի զգացմունքների և մտածողության վրա: Հաղորդակցությունը իրագործվում է «միայն սոցիալական միջավայրում» և «պահանջում է պարտադիր համապատասխանություն լայն շառավղով սոցիալական կառուցվածքին և գիտելիքներին» և մշտապես ունի նպատակային կողմնորոշվածություն [8, էջ 256]:

Թեմատիկ խմբերի որոշման ժամանակ կրտսեր դպրոցում մայրենի դասագործընթացում սովորողի բառապաշարի հարստացման ուղղությամբ աշխատանքի կազմակերպումը բառարանների միջոցով անհրաժեշտ է հիմնվել «հասարակության աճող սերնդի դաստիարակության սոցիալական պատվերի վրա», որը ապահովում է բազմակողմանի զարգացման հնարավորություններ» [9, էջ 336]:

Յուրաքանչյուր թեմատիկ խումբ ներառում է մեծաթիվ բառերի քանակ: Դրանց նվազագույնը աշակերտների հարստացման գործում հիմնվում է մի քանի սկզբունքների վրա:

1. **Հաճախականության սկզբունք,** որի դեպքում ընտրվում է բառերի որոշակի ցանկ տարբեր տեքստերի հաճախակի օգտագործումից:

2. **Հաղորդակցության սկզբունք.** Ընտրվում է այնպիսի բառերաշանակ, որը երեխային նախապատրաստում է կյանքին՝ իրականացնելով հաղորդակցում սոցիալական միջավայրում:

3. **Համակարգայնության սկզբունք.** Պահանջում է ներառել բառաֆոնդի դոմինանտող լեզվական- իմաստային խմբեր:

4. **Ոճական սկզբունք.** Ապահովում է բառաֆոնդում այնպիսի բառերի ներառումը, որոնք արտահայտում են վերաբերմունք առարկայի և բառի միջև, այսինքն՝ զգացմունքային- ոճականորեն գունազարդված բառեր:

Մայրենիի դասերին սովորողների բառապաշարի հարստացումը հենվում է կրթական գործընթացում իրականացվող հետևյալ պահանջների վրա.

1. **լեզվաբանական**.. լեզվի մասին որոշակի գիտելիքների իմացության, որոնց հետ էլ կապված է բառերի իմաստի և դրանց օգտագործման աշխատանքը,

2. **հոգեբանական**. Երեխաների կողմից նոր բառերի յուրացման գործընթացի մասին ուսուցչի գիտելիքները,

3. **դիդակտիկական.** Երեխաների գիտելիքներն են կյանքի, իրենց մասին, ինչպես նաև ուսուցչի գիտելիքները մայրենիի դասերին կրթական գործընթացի առանձնահատկությունների մասին:

Լեզվաբանական պահանջները աշակերտների բառային աշխատանքի համար նվազագույն գիտելիքների առկայությունն է լեզվի վերաբերյալ և համապատասխանաբար իրենց բազային լեզվական կարողությունները: Բազայինին են առնչվում լեզվի մասին այն գիտելիքները, որոնք օգնում են բացահայտել բառը

ա/ որպես լեզվի բառակազմական համակարգի միավոր,

բ/որպես լեզվի քերականական համակարգի միավոր,

գ/ որպես լեզվի ոճական տարբերակվածության տարր:

Լեզվական կարողություններն ապահովում են դպրոցականների մոտ բառերի ճիշտ օգտագործումը իրենց շանակության և օգտագործման ոլորտների ձևավորման համապատասխանությամբ:

Հոգեբանական պահանջները ասվող կամ գրվող բառերի հատուկ հոգեբանական հարաբերություններ են: Հոգեբանորեն ապացուցված է հետևյալ դրույթը բառային

աշխատանքի կազմակերպման վերաբերյալ. բառը յուրացվում է արագ և հեշտ, եթե դրա ուսուցումը կատարվում է իմաստի բացատրության հետ միաժամանակ, եթե բառն ու նրա նշանակությունն ունեն զգացմունքայնություն, եթե բառային աշխատանքի ընթացքում բառերի հետ կատարվում են ասոցացումներ, եթե հատուկ ուշադրություն է դարձվում անծանոթ բառերի յուրացմանը:

Սովորողների բառապաշարի հարստացման գործում մեծ դերակատարում ունի երեխաների մոտ նոր բառերի նկատմամբ հետաքրքրության առաջացումը, սեփական բառապաշարի համալրումը նորանոր բառերով: Նոր բառերի նկատմամբ երեխաների հետաքրքրության բացակայությունը, անուշադրությունը հանդիսանում են պատճառ, որը խանգարում է նրանց բառապաշարի հարստացման գործընթացին:

Ուսուցիչները երեխաների մոտ անծանոթ բառերը տեսնել կարողանալու ունակության ձևավորման համար հիմնականում օգտագործեցին հետևյալ մեթոդիկան. 2-րդ դասարանում «Մայրիկի հաշիվը» ստեղծագործությունն անցնելիս աշակերտները մինչև հիմնական առաջադրանքները կատարելը, նախ կարդացին տեքստը, ապա անվանեցին անծանոթ բառերը, որոնք պետք է փորձեն կռահել նախադասությունից ելնելով: Երեխաներից ոչ ոք չգիտեր՝ ինչ է ռուփին: Իհարկե, տեքստի վերջում կարդում են այդ անծանոթ բառի բացատրությոնը, որից և օգտվեցին նրանք: Այնուհետև երեխաները գտան ուրիշ անծանոթ բառեր, որոնց բացատրությունը չկար բնագրի վերջում: Այդպիսի բառերը փորձեցին բացատրել նախադասությունից ելնելով: Որոշ դեպքերում ուսուցիչը միջամտեց և օգնեց բացատրությանը: Անհասկանալի բառերի որոշակի ցանկ էլ առաջարկեց այդ բառերի բացարտրությունը գտնել բառարանում:

Այսպիսի մեթոդիկան արդարացված է և խթանում է երեխաների ինքնուրույնությունը, ավելին իմանալու ցակությունը, ինչն էլ նպաստում է աշխարհաճանաչողությանը:

Մայրենիի դասագործընթացում աշակերտներն ստանում են ինչպես լեզվական, այնպես էլ ոչ լեզվական գիտելիքներ: Երեխաները լեզվի մասին գիտելիքները ստանում են ուսումնասիրելով լեզուն և դրա հետ մեկտեղ լրացնում են իրենց բառապաշարը՝ յուրացնելով լեզվական եզրույթներ: Օր՝ հոմանիշ, հականիշ: Ոչ

լեզվական գիտելիքները / շրջապատող իրական աշխարհի մասին/ սովորողները ձեռք են բերում բառարանների, մասամբ վարժությունների տեքստերից, ինչպես նաև դեպի բնություն էքսկուրսիաների, մշակույթի հետ հաղորդակցման, սպորտում մասնակությամբ, թատրոններ այցելությամբ և այլն, որտեղ նոր գիտելիքներ ստանալու հետ մեկտեղ սովորում են նոր բառեր:

Ուսուցչի խնդիրն է հետևողական լինել աշակերտների յուրացրած բառերն օգտագործելուն քերականությունն ուսումնասիրելիս և առօրյա աշխատանքում:

1.2. Հետազոտական աշխատանք

Մայրենիի դասերին բառարանների օգտագործումը երեխաների բառապաշարի հարստացման և աշխարհաճանաչողության զարգացման նպատակներով

Հետազոտական աշխատանքն իրականացվել է Կոտայքի մարզի ՝՝Աբովյանի կրթահամալիր՝՝ ՊՈԱԿ-ի 2-րդ – 4-րդ դասարաններում:

Նպատակը՝ բառարանների օգտագործումը որպես երեխաների բառապաշարի հարստացման և աշխարհաճանաչողության միջոց:

Հետազոտությունը սկեսցինք անկետավորումից: Անկետավորման նպատակը՝ բացահայտել սովորողների՝ բառարանների մասին գիտելիքների մակարդակը՝ բառարանների ազդեցությունը երեխաների հոգեկերտվածքի վրա: Անկետավորումներն անկանոն էին, դրա համար էլ կարելի էր ստանալ առավելագույն անկեղծ պատասխաններ: Այն ներառում էր հետևյալ հարցերը.

1. Ի՞նչ է բառարանը:
2. Բառարանների ի՞նչ տեսակներ գիտեք:
3. Կարողանո±ւմ եք օգտվել բառարաններից:
4. Ո՞ր դեպքում եք օգտվում բառարաններից:
5. Մայրենիի դասերին արդյո՞ք աշխատել եք բառարաններով:
6. Ահրաժեշտ են արդյոք բառարանները մարդուն:

Աշակերտների պատասխանները վերլուծելով՝ մենք եկանք այն համոզման, որ անհրաժեշտ է տալ բառարանի սահանումը / իրենց տարիքին համապատասխան/, ծանոթացնել նրանց բառարանների տարբեր տեսակներին, բարձրացնել բառարաններին «դիմելու» պահանջմունքը ոչ միայն մայրենիի ժամերին, այլև կյանքի տարբեր իրավիճակներում: Ընդհանրացնելով երեխաների պատասխանները՝ եկանք հետևյալ եզրակացության, որ երեխաները գիտակցում են բառարանների կարևորությունը մարդու կյանքում, բայց աշակերտներից քչերն են օգտագործում ուսումնական գործունեությունից դուրս: Հետևաբար մեր առաջնային խնդիրը եղավ հետաքրքրություններ առաջացնել «բառարան» կոչվող գրքերի նկատմամբ:

Հետազոտության մյուս փուլը եղավ ինքնուրույն աշխատանք, որոնք ևս առաջադրվեցին երեխաներին: Աշխատանքի նպատակն էր ստուգել՝ ինչքանով է հարուստ երեխաների բառապաշարը, բացահայտել նրանց գրագիտությունը՝ ուղղագրական, խոսքային կարողությունները: Ինքնուրույն աշխատանքը ներառում էր չորս առաջադրանք, որոնցից երեքը կազմված էին երկու մասից՝ տեսական / ընդհանուր գիտելիքների մակարդակ/ և գործնական/բացատրել բառի իմաստը /ուղղագրությունը/: Վերջին առաջադրանքը ընդհանրացնող բնույթի էր: Այն ուղղված էր ստուգելու սովորողների գիտելիքները հետազոտության խնդիրներից ելնելով:

Ստորև ներկայացնում ենք ինքնուրույն առաջադրանքը:

Առաջադրանք 1

ա/ Ի՞նչ եք կարծում , ի՞նչ նշանակություն ունեն բացատրական բառարանները:

--

Բ/ Գրե՛ք տրված բառերի բացատրությունը:

ագի----------

զարզանդել----------

թեժ----------

Առաջադրանք 2

ա/ Ինչի՞ համար են անհրաժեշտ ուղղագրական բառարանները: Գրե՛ք ձեր կարծիքը:

բ/ Լրացրե՛ք բաց թողնված տառերը .

ար_, _ռեկո, սար_, խն_իր, եղ_նի, Մեռսրոպ _աշտոց, կես_ր:

Առաջադրանք 3

ա/ Ինչի՞ համար են նախատեսված հոմանիշների բառարանները:

բ/ Գրել տրված բառերի հոմանիշները .

պոչ----------

կարմիր----------

քամի----------

Առաջադրանք 4

Թվարկե՛ք ձեզ ծանոթ բառարանների տեսակները:

Կարելի է եզրակացնել, որ աշակերտները բառարանների տեսակների մասին լսում էին առաջին անգամ: Բացի թվարկված բառարաններից՝ աշակերտները չէին կաչողացել գրել ուրիշ տեսակի բառարանների մասին: Ինքնուրույն աշխատանքի արդյունքները մտահոգիչ էին: Աշակերտներից 2-ն էին պատասխանել բոլոր հարցերին, բայց թերություններով: Մեզ զարմացրեց այն փաստը, որ երեխաները չգիտեին այս կամ այն բառերի անհրաժեշտության մասին:

Մենք եկանք այն եզրակացության, որ երեխաները նախկինում չէին օգտվել դրանցից: Մենք մեր առաջ նպատակ դրեցինք սովորեցնել աշակերտներին՝ օգտվելու առաջին հերթին այս երեք բառարաններից, ապա նաև անդրադառնալ մյուսներին ևս՝ հաշվի առնելով նրանց տարիքային առանձնահատկությունները:

Այստեղ մենք հանդիպեցինք խոչընդոտի ևս. դպրոցը չուներ բոլոր երեխաների համար նախատեսված բառարաններ: Դրանցից կային ընդամենը 1-ական օրինակ: Հետևաբար պետք է եզրակացել, որ այս աշխատանքը երբևէ չէր կարևորվել: Բայց մենք աշակերտների հետ գտանք մի հնար՝ աշխատել բառարանով դասերից հետո:

Մենք հիմնվեցինք հիմնականում հետևյալ բառարանների վրա.

1. Հայերեն online բառարան, որ հոմանիշների բառարաններ / տեղեկություններն արժանահավատ են , քանի որ բառերի բացատրություններն ու հոմանիշները վերցված են Էդ.Աղայանի արդի հայերենի բացատրական բառարանից, Ա.Սուքիասյանի հայոց լեզվի հոմանիշների բառարանից/:
2. Լ. Տեր- Գրիգորյան, Ա.Գալստյան, Ուղղագրական բառագրքույկ
3. Ա.Գալստյան, Հատուկ անունների բառարան տեղեկատու:

Մենք կարծում ենք, որ սկզբում անհրաժեշտ է տալ բառի բացատրությունը, դրա ուղղագրությունը, ապա հոմանիշները, քանի որ շատ բառեր անհայտ են կամ անհասկանալի երեխաների համար: Նրանք սխալվում են դրանց ուղղագրությունից: Պետք է հասնել նրան, որ այդպիսի բառերը՝ անհասկանալի, անհայտ, անցնեն պասիվից ակտիվ բառապաշարի: Իսկ սա անհրաժեշտ պայման է երեխաների խոսքի և աշխարհաճանաչողության համար:

Մեր կարծիքով, որպեսզի բառարաններով աշխատանքը որպես բառապաշարի հարստացման և աշխարհաճանաչողության միջոց, լինի արդյունավետ, այն պետք է իրականացվի ոչ միայն մայրենիի դասաժամերին, այլև տանը:

Դրա համար էլ աշակերտներին իրենց տնային աշխատանքի հետ մեկտեղ ավելացավ ևս մեկը՝ աշխատել բառարանների տարբեր տեսակներով /բացատրական, ուղղագրական, հոմանիշների, դարձվածքների և այլն: Նմանատիպ աշխատանքի անբաժան մասն է կազմում նաև դասի կառուցվածքում ներառել բառարանների օգտագործումը:

Մենք կազմակերպեցինք նաև արտադասարանական միջոցառում «Բառարանները մեր օգնականներն են» թեմայով: Այդ միջոցառման ժամանակ մենք ծանոթացանք բառարանների տարբեր տեսակներին, անդրադարձանք դրանց անփոխարինելի նշանակությանը մարդու կյանքում: Եկան այն եզրահանգման, որ բառարանները մեզ սովորեցնում են պահպանել մեր ոսկեղենիկ հայերենը, նրա անսահման հարստությունը:

Ինչպես արդեն նշել էինք, բառարաններով աշխատանքը պետք է լինի ամեն դասի ժամանակ: Այս իսկ պատճառով մենք ամեն դասի 5-7 րոպե տրամադրեցինք բառարանով աշխատանքին: Երեխաները փորձում էին բացատրել բառը և դարձվածքը, բառի ուղղագրությունը, կազմությունը: Բոլոր բառերը նախօրոքք գրվում էին գրատախտակին: Այնուհետև երեխաների պատասխանները համեմատում էինք բառարանային պատասխանների հետ :Երեխաները ստացան տնային աշխատանք. Գրել տրված բառերի բացատրությունը, սովորել ուղղագրությունը, գրել հոմանիշները և բացատրել դարձվածքի նշանակությունը: Հաջորդ դասին ստուգվում էին տնային աշխատանքը և տրվում էր նորը: Այս կերպ երեխաների մոտ բառարաններով աշխատելու ունակություն, իսկ հետո նաև հմտություն է ձևավորում:

Բառերը, որոնցով աշխատում էին երեխաները, սովորում էին, հետագայում ներառվում էին բառային թելադրության մեջ: Յուրաքանչյուր դասին մենք առաջադրում էին սովորողներին կատարել բառարաններով անհատական աշխատանք, ընտրել բառային թելադրություն և հաջորդ դասին կատարել ուսուցչի դերը: Այս առաջադրանքը մեր հետազոտության ընթացքում կատարեց

յուրաքանչյուր աշակերտ: Սա, անկասկած, հետաքրքրություն առաջացրեց երեխաների մոտ:

Դասերի ժամանակ մենք բացատրում էին բառը, մտածում ուղղագրության շուրջ, կազմում բառակապակցություններ և դրանք օգտագործում նախադասությունների մեջ:

Օր.՝ **ագի -բացատրություն**

1. Պոչ: 2. փխբ. Կանանց զգեստի և հետևի երկար քղանցք:

Երեխաներն անվանեցին տարբեր կենդանիների պոչեր, ինչպես տրված էր նկարում, ապա բառն օգտագործեցին փոխաբերական իմաստով՝ հագուստի ագի:

Այնուհետև կազմեցին բառակապակցություններ և դրանք օգտագործեցին նախադասությունների մեջ:

Երկար պոչ, աղվեսի պոչ, բարակ պոչ:

Աղվեսի պոչն իր վկան է:

Մկնին ունի բարակ պոչ:

Այնուհետև անդրադարձան բառի հոմանիշներին: Երեխաները մի դասի ժամանակ սովորեցին 4 բառ, ինչը հոգեբանական առումով թույլատրելի է : Այդ բառերով ևս կատարվեց նույն աշխատանքը:

ագի - հոմանիշներ
պոչ, ձետ, տուտ, տտուն:

Այնուհետև սովորեցինք ագի բառով դարձվածքներ, որոնք ունեն նույն արժեքը, ինչ պոչ բառով կազմված դարձվածքները:

Ագի (պոչը) կշռել – բացատրություն, հեռացնել , վռնդել
Ագի (պոչ) խաղացնել - բացատրություն
1. Խորամանկել, խորամանկորեն խուսանավել: 2. Մեկին շողոքորթել, մեկի սիրալիրությանն արժանանալու ձգտել:
3. Խորամանկությամբ մի բանի խառնվել միջամտել, մատ խառնել:

Այսպիսի աշխատանքի շնորհիվ երեխաների բառապաշարը հարստացավ նոր բառերով: Նրանց մոտ տվյալ բառերն օգտագործելիս չառաջացան դժվարություններ:

Մայրենիի ժամերին մենք նաև օգտագործեցինք ինքնատիպ լեզվական խաղեր, լրացուցիչ և ստեղծագործական առաջադրանքներ, որոնց կատարումը պահանջում էր բառարանների տարբեր տեսակների օգտագործումը: Ստորև նշվում են այդպիսի վարժություններից մի քանիսը:

1. **Կարդալ և նշել տրված բառերի արմատները:**

<u>տն</u>ային, <u>ծաղկ</u>ավոր, <u>գր</u>ական, <u>բժշկ</u>ություն

2. Գտնել իմաստային տարբերությունները, դրանցով կազմել նախադասություններ:

Մարդ - մարտ, հարդ - հարթ, լուրթ - շուրթ

3. Ո՞ր ձևն է ճիշտ:

դարի - դարու

օրվա - օրու

տան - տունի

4. Գրել դարձվածքների իմաստը՝ օգտվելով դարձվածաբանական բառարանից:

Աչքը ծակ _____

Ականջ կախելÉ_____

Բերան ծռել _____

Բերանը բաց մնալ_____

Կաշին և ոսկորը մնալ_____

Այս բոլոր առաջադրանքները երեխաների մոտ հետաքրքրություն առաջացրին կրթական գործընթացի նկատմամբ, ակտիվացրին նրանց բառարաններից օգտվելու կարողություն:

Ներկա ժամանակներում արդեն գոյություն ունեցող բառարանների կողքին հայտնվում են նորերը: Բառարաններով աշխատանքը հեշտացնում է մարդու կյանքը: Սրա համար էլ առաջարկեցինք երեխաներին կազմել ինչ-որ իրական բառարան: Երեխաները որոշեցին կազմել **«Բարեկիրթ բառարան»:** Այսպիսի

աշխատանքը մեզանից պահանջեց երկար ժամանակ և մեծ ջանքեր,, քանի որ միայն այդ դեպքում կարելի էր հասնել ցանկալի արդյունքի: Երեխաները ընտրեցին համապատասխան բառեր, գտան դրանք բացատրությունը, դասավորեցին այբբենական կարգով/ սա պարտադիր պայման է բառարան կազմելու համար/: Վերջնական փուլում պետք է ձևավորվեին գրքույկը: Սա թողնված էր երեխաների երևակայությանը , բայց կարևոր պայման էր, որ շապիկը համապատասխաներ գրքի բովանդակությանը: Աշխատանքի այս ձևը նպաստեց աշակերտների ստեղծագործական ունակությունների բացահայտմանը: Աշխատանքն ավարտելուց հետո այն ցուցադրվեց և գնահատվեց: Երեխաներն անչափ ոգևորված էին, քանի որ նրանք հանձն էին առել լուրջ աշխատանք կատարելու, որը կատարում են միայն մասնագետները: Սա նպաստեց նրանց ինքնագնահատականի և աշխարհաճանաչողության բարձրացմանը: Երեխաներն իրենք եկան այն եզրակացության, որ բոլոր բառարաններն էլ արժանի են ուշադրության, նրանց մեջ չի կարելի առանձնացնել լավն ու վատը:

Մեր հետազոտական աշխատանքի անքակտելի մասն էր բառային թելադրություններ առաջադրելը, որտեղ ստուգվում էին երեխաների գիտելիքները, ձեռքբերումները:

Որպեսզի ամփոփվեր աշխատանքի արդյունքնորը, մենք կրկնեցինք ինքնուրույն աշխատանքն ու անկետավորումը: Արդյունքները վկայում են , որ նրանց խոսքը կիրթ էր , զարգացած, տեղեկացված էին գիտության տարբեր բնագավառներից: Նրանց գիտելիքները համալրվել ու համակարգվել էին: Աշակերտները սկսել էին շատ օգտվել բառարաններից: Մենք հույս ունենք, որ դա կդառնա սովորույթ, և բառարանները կդառնան նրանց լավ ընկերները:

Հետազոտության վերջին օրը մենք առաջադրեցինք երեխաներին գրել իրենց կարծիքը բառարաններով աշխատանքի վերաբերյալ:

1. ***«Ինձ շատ դուր եկավ աշխատանքը բառարանների հետ, քանի որ սովորեցին շատ բառեր: Ես իմացա, որ մեկ բառը կարող է ունենալ տարբեր իմաստներ: Ես նաև չգիտեի , որ հայերենում այդքան բառ կա»:***

2. *«Ինձ դուր եկավ բառարանով աշխատելը, քանի որ իմ չիմացած բառերը կային բառարանում, և ես անմիջապես սովորում էի նոր բառեր»:*

3. *«Երբ մեր ուսուցչուհին ամեն օր տալիս էր առաջադրանքներ տարբեր բառարաններից սկզբում ես դժվարանում էի բառերը փնտրել, իսկ հիմա ես օգնում եմ նաև եղբորս: Մենք բառարանից դուրս էինք գրում բացատրություններ և հիշում դրանց ուղղագրությունը ,քանի որ պետք է թելադրություն գրեինք: Ես իմացա նաև բառարանների տեսակների մասին»:*

Ուսումնասիրելով մայրենիի լավագույն ուսուցիչների փորձը՝ եկանք այն եզրակացության, որ բառարաններով աշխատանքը խոսքի զարգացման, բառապաշարի հարստացման և աշխարհաճանաչողության զարգացմանն ուղղված աշխատանք է, և այդ աշխատանքին պետք է տրվի մեծ տեղ:

Այս աշխատանքի արդյունավետությունը կախված է ուսուցչի կազմակերպական, մասնագիտական կարողություններից: Նորագույն տեխնոլոգիաների օգտագործումը մեծացնում է երեխաների հետաքրքրությունը դասի նկատմամբ: Իսկ բառարանով աշխատանքի կազմակերպումը նոր խոսք է մայրենիի դասավանդման մեթոդիկայում: Անհրաժեշտ է սովորողների մեջ ձևավորել տարբեր տեսակների բառարաններից օգտվելու կարողություն:

Եզրափակելով մեր հետազոտական աշխատանքը՝ պետք է ասել, որ բառարանների սիստեմատիկ օգտագործումը մայրենիի դասերին կնպաստի երեխաների բառապաշարի հարստացմանը, կզարգացնի խոսքը, աշխարհաճանաչողությունը: Հետևաբար առաջադրված վարկածը ճշմարիտ է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բառարանները որպես կրտսեր դպրոցականների բառապաշարի հարստացման և աշխարհաճանաչողության միջոց» դրույթը նորովի է դիտարկվում մայրենիի ուսուցման գործընթացում: Այն դեռևս քիչ է ուսումնասիրված:

Փորձելով գնահատել բառարանների դերը ուսուցման գործընթացում՝ մենք եկանք այն համոզման, որ բառարանը մեծ նշանակություն ունի 21-րդ դարի աշակերտի համար: Նրա գլխավոր խնդիրն է ազդել մարդու բառապաշարի հարստացմանը, աշխարհաճանաչողությանը, աշակերտների խոսքը դարձնել գրագետ:

Ուսումնասիրելով մայրենիի լավագույն ուսուցիչների փորձը՝ մենք եկանք այն եզրակացության, որ բառարանով աշխատանքը խոսքի զարգացման բառապաշարի հարստացման և աշխարհաճամաչողության շուրջ տարվող աշխատանք է , և այն պետք է գրավի առաջնային տեղ: Այս աշխատանքի արդյունավետությունը կախված է ուսուցչից: Նորագույն տեխնոլոգիաների օգտագործումը մեծացնում է երեխաների հետաքրքրությունը դասի նկատմամբ, իսկ բառարանով աշխատանքը նորագույն տեխնոլոգիա է , որից պետք է օգտվեն մայրենին ուսուցանելիս: Անհրաժեշտ է սովորողների մեջ ձևավորել տարբեր տեսակի բառարաններից օգտվելու կարողություն, որը կբարձրացնի նրանց խոսքի մշակույթը:

Հետազոտության ընթացքում բառարանների շուրջ կիրառված մեթոդական աշխատանքները տվեցին անսպասելի արդյունքներ: Նախ և առաջ երեխաները .

- ✓ ստացան տարրական գիտելիքներ բառարանի մասին , կարևորեցին դրա նշանակությունը,
- ✓ ծանոթացան բառարանների տեսակների հետ, յուրացրին դրանցով աշխատելու առանձնահատկությունները,
- ✓ աշխատեցին բառի բացատրության , հոմանիշների, հականիշների, բառի ուղղագրության շուրջ ,
- ✓ ձեռք բերեցին աշխարհաճանաչողական գիտելիքներ, հարստացրին բառապաշարը,

✓ աշխատանքը նպաստեց աշակերտների հոգևոր և մտավոր զարգացմանը, բարձրացրեց ակտիվությունը, ձևավորեց ինքնուրույնություն:

Մեր աշխատանքի ամենաշոշափելի արդյունքը նաև այն էր, որ բառարաններով աշխատանքը նրանց այնքան հետաքրքրեց, որ իրենց մեջ արթնացավ նոր գաղափար, նոր միտք, այն է , ստեղծել սեփական բառարան՝ «Բարեկիրթ բառերի իմ բառարանը», որը թեև ծավալով փոքր է, բայց 2-րդ դասարանի աշակերտի համար նոր, ամուր քայլ բառարանով աշխատանք կազմակերպելու համար: Բառարանի կազմումը նպաստեց նրանց խմբային աշխատանքի արդյունավետության բարձրացմանը, բարձրացրեց աշակերտների ինքնագնահատականը, երեխաների մեջ դաստիարակեց բարեկիրթ վերաբերմունք բոլորի նկատմամբ, քանի որ յուրաքանչյուր բառարանագիր իր վարքով պետք է լինի կենդանի օրինակ մյուսների համար:

Եզրափակելով աշխատանքը՝ պետք է ընդգծել , որ բառարանների օգտագործումը մայրենիի դասերին նպաստեց երեխաների բառապաշարի հարստացմանը, զարգացրեց խոսքը, աշխարհաճանաչողությունը, ձևավորեց ստեղծագործականություն, ինքնուրույնություն: Հետևաբար առաջադրված վարկածը ճշմարիտ է:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան Է.Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, 949 էջ:
2. Գալստյան Ա. Վ., Հատուկ անունների բառարան – տեղեկատու (տարրական դպրոցի աշակերտների համար), Եր., 2010, 160էջ:
3. Գասպարյան Գ., Հայ բառարանագրության պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1968, 563 էջ:
4. Գյուլամիրյան Ձ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր., 2006, 328 էջ:
5. Գյուրջյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 3: Հանրակրթական դպրոցի դասագիրք, Եր., 2011,160 էջ:
6. Գյուրջյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 4: Հանրակրթական դպրոցի 4-րդ դաս. դասագիրք, Եր, 2010,192 էջ:
7. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան,Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Եր., 1969:
8. Звегенцев В.А., Социальное и лингвистическое в социолонгвистике// Известия АН СССР.-1982-Вып..3,с.256.
9. Совершенствование методов обучения русскому языку:(Сб. статей). Пособи для учителей(Сост. А.Ю. Купалова),М., 1981,с.80.